

Մ Թ Ն Ո Ւ Ո Ր Տ

Մթնոլորտին վրայ հետևեալ հատուածը Բագմավէպ օրագրին մէջ գրեւովս ուրիշ բան չեմ ընեմ՝ բայց եթէ Բարիզու բժշկական համալսարանը լսած դասերուս մէկ քանին համառօտել: Եթէ անկատար գրութիւնս ուրիշներուն ալ օգտակար կըրնայ ըլլալ՝ ինչպէս որ ինձ առիթ մ'է տեղն 'ի տեղն իմ՝ ուսմունքս սորվելու, փափաքս կատարած կ'ըլլամ:

Այս բնաբանական բանախօսութիւնն ընելու վախճանս ալ այն է՝ որ մէջի գտնուած վարդապետութեանց շատերը նոր գիտեր են և դարուս երեկի բնագիտաց փորձերու հաւաքմունք մըն է. միւս կողմանէ ալ մթնոլորտին առողջութեան վրայ ըրած ազդեցութիւնը գիտնալը շատ կ'օրուոր և հետաքրքրական ուսմունք մըն է:

Մ Ի Բ Ա Յ Ե Լ Կ Ի Գ Ի Մ Ե Ն Ս

Աշխէրք Մոսկուայի Աւթօբանին

Երկիրս 13-14 փարսախ թանձրութեամբ հեղանիւթով մը պատած է, որ ամեն դիէն զայն կը շրջապատէ և հաւասարապէս բոլորովը կը տարածուի: Այս մթնոլորտի և գործարանաւոր էակաց մէջ անընդհատ և փոփոխակի յարաբերութիւններ կան. կենդանիք և բոյսք իրենց հարկաւոր եղած մարմինները անկէ կը քաղեն, և իրենց կատարեալ զարգացումը, նոյն իսկ գոյութիւննին բոլորովին այս հեղանիւթով կ'ապահովուին մէջ հանդիպած փոփոխութիւններէն կը կախուին:

Օդը կազերու և շոգիներու պարզ խառնուրդ մըն է, որուն մէջ կը գտնուին նաև տեսակ տեսակ փոշիներ. աս փոշիներէս շատերը հանրային մարմիններէ առաջ կու գան, միւսերը այլ և այլ բուսերէ և բուսոց սերմերէ և բողբոջներէ, զորոնք հովերը կ'առնուն հեռաւոր տեղումը կը փոխադրեն: Առանց ուղեւոր երկայն խօսիլ օդը վերլուծելու համար գործածուած կերպերուն վրայ, որ բնալուծութեան ուսման կը վերաբերին, պիտի տեսնենք յաջոր-

դարար օդոյն տարերայը պաշտօնը կենաց երևութիւնը կատարելու աստիճան, պիտի փնտռենք միանգամայն եթէ այս տարերայ քանակութիւնը երբեմն կը փոփոխի, և պիտի մեկնենք մթնոլորտի ճնշմանէն և օդոյ բարեխառնութեան կենաց վրայ պատճառուած ազդեցութիւնները:

Մարդս, ինչպէս նաև կենդանիք, իրենց պիտոյից: համեմատ միակերպ օդին մէջ գտնուած թթուածին կազը կը շնչեն. այս թթուածինը շնչառութեան գործարանաց միջոցաւ արեան շրջանին մէջ կ'երթայ կը խառնուի, և նուրբ երակաց մէջ հասնելով՝ արեան երլուակ և քուրուակ ըսուած նիւթերը՝ կ'այրէ. ահա այս կիզումն է կենդանական ջերմութեան պատճառը: Բայց թթուածինը զածուխը այրելով՝ ամսական թթու կը ձևանայ, զոր միակերպ կ'արտաշնչենք: Ստորին կարգի կենդանիք՝ որոնց մերթը անմիջապէս օդին հետ հաղորդակցութիւն ունի, ոչ միայն իրենց բերնովը թթուածինը կը շնչեն և ամսական թթուն կ'արտաշնչեն, այլ և մերթերնուն ծակտիներն այս բանիս համար իրենց շատ կը ծառայեն. թթուածին կազը բուսոց աճմանն ալ խիստ հարկաւոր է. բոյսք երեք առիթի մէջ կենդանեաց կէս կ'ապրին. սերմը ծլելու ժամանակ թթուածին կը ծծէ, ունեցած ամուխը կ'այրուի և ամսական թթու գուրս կը հանէ. նմանապէս բուսոց բազմանալու գործարանըն՝ այսինքն ծաղկըները իրենց գունաւոր մասերով թթուածին կը ծծեն և ամսական թթու կ'արտաշնչեն: Իսկ մթութեան ժամանակ, թէպէտ և բուսոց գործարանաց զօրութիւնը կը տկարանայ, սակայն ծառերուն կանաչ մասերը և պզտի տունկերը թթուածին կը ծծեն և ամսական թթուով զօդը կ'ապականեն. ասոր հա-

1 Երբեքի Կի-Լա (Գղ. Matières ternaires) կ'ըսուին այն մարմինները որոնք ջրածին, թթուածին կազերէ և ածխէ բաղադրեալ են. ինչպէս է շաքարը: Իսկ Բու-Լա Կի-Լա (Գղ. matières quaternaires) ըսուածները թթուածին, ջրածին կազերէ և ածխէ զատ ունին նաև ազօդ կամ անկենդան կազեր. ինչպէս են մար և հաւկիթը:

մար ալ վտանգալի է պառկելու սե-
նեակի մը մէջ դիշեր ատեն կամ շուք
տեղ մը բոյսեր և ծաղկըներ պահելը :
Ինչուան հիմա զուրցածներնէս կը հե-
տեի ոչրեմն թէ մարդիկ և կենդանիք
առանց թթուածին կազի չեն կրնար
ապրիլ, իսկ բոյսք չեն կրնար ծլիլ և
բազմանալ :

Մթնոլորտին մէջ գտնուած ազոդը
կենդանեաց հարկաւոր չէ . այս բանիս
համար եղած փորձերը կը ցուցնեն թէ
կենդանիք իրենց հասարակ վիճակին
մէջ անկենդան կազ կ'արտաշնչեն , բայց
զայն օդէն չեն առնուր ամենևին . սա-
կայն պզտի կենդանի մը անօթի պա-
հուելու որ ըլլայ , ան ատեն թթուա-
ծնին հետ քիչ մ'ալ ազոդ կը շնչէ մթնո-
լորտէն : Իսկ բոյսք առանց ազոդի չեն
կրնար աճիլ , և միակերպ այս կազը կը
ծծեն , բայց օդին մէջ խառնուածը չէ ,
հապա ամիննիաքին¹ բաղալուծմանէն
առաջ եկածը և կամ երկրիս ազոդային
մարմնոց մէջ գտնուածը :

Ինչուան հիմա տեսանք որ բոլոր կեն-
դանեաց շնչառութենէն ածխական թը-
թու առաջ կու գայ . բայց անշարժ ջրե-
րուն վրայ խոշորացուցով տեսնուած
կարմրագոյն և կանաչագոյն պզտի կեն-
դանիները արևուն ճառագայթից ազ-
դեցութեամբը՝ բուսերու պէս ածխա-
կան թթուով² կ'ապրին , ածուխը իրենց
կը սեպհականեն և մնացած թթուածի-
նը դուրս կը թափեն : Նոյնպէս կ'ապ-
րին ջրածծիներն³ ալ , որոնց բազմու-
թիւնը շատ անգամ ծովեզերեայ ջրերը
կը պղտորեն և կը գունաւորեն : Ուրեմն
այս երկու կարգ կենդանիները ընդ-
հանուր օրէնքէն կը խոտորին :

Ածխական թթուն նոյն պաշտօնը կը
կատարէ բուսոց համար , ինչ որ կ'ընէ
թթուածինը կենդանեաց նկատմամբ :
Ածխական թթուն կենաց երևութից
վրայ մեծ ազդեցութիւն ունի . ամբողջ

բուսականութիւնը իր կանաչ մասերու
վր և արևուն ճառագայթման միջոցաւը
ածխական թթուն կը բաղալուծէ , ա-
ծուխը իրեն կ'առնու և թթուածինը
դուրս կու տայ : Որով պայծառ կը տես-
նենք Նախախնամութեան սահմանած
պանչելի օրէնքը . քանի որ կենդանիք
զօդը կ'ապականեն , միւս կողմանէ ցո-
րեկ ատեն բոյսերը զայն կը մաքրեն :
Բայց ածխական թթուին պակսիլը բու-
սականութեան եղծմանը պատճառ կ'ըլ-
լար . իսկ որովհետև բոյսք ուղղակի կամ
անուղղակի կերպով կենդանեաց կե-
րակուրն են , բուսոց փճանալովը՝ հե-
տևաբար կենդանիք և մարդիկ անօթու-
թենէ կը մեռնէին :

Մթնոլորտին մէջ պզտի մաս մ'ալ
ամիննիաք կազէն կը գտնուի , որ բու-
սոց անհրաժեշտ հարկաւոր եղած ազո-
դը կու տայ . այս պզտի մաս ամիննիա-
քին ձեռքովը՝ բոյսերը խիստ կարևոր օ-
րէնք մը կը կատարեն , այսինքն անգոր-
ծարանաւոր մասնիկը⁴ գործարանա-
ւոր մասնիկ⁵ կը դարձնեն :

Նմանապէս օդին մէջ կը գտնուի ած-
խուտ ջրածինը⁶ , բայց այնպիսի քա-
նակութեամբ՝ որ վնաս մը չհասցըներ .
այս կազը գործարանաւոր էակաց աճ-
ման և ապրելուն ամենևին կարևոր չէ :

Իսկ օդին մէջ գտնուած ջրի գոլոր-
շիքը անմիջապէս հարկաւոր է ամեն
գործարանաւոր էակաց , վասն զի բոլո-
րովին չորցած օդին մէջ բոյսը շուտով
կը թմրի և կ'ապականի . բայց այս ջու-
րը միշտ գոլորշի վիճակին մէջ չմնար ,
երբեմն խտանալով անձրև և ցօղ կը
դառնայ և երկիրս ոռոգելով բուսոց
կազմուածքին էական տարրերէն մէկը
կը կազմէ . վասն զի որ և իցէ բուսոյ
ատաղձըը⁷ մաս ածխով և 10 մաս
ջրով բաղկացած կրնանք սեպել : Զրին
հարկաւորութիւնը ասկէց ալ յայտնի
է՝ որ միակերպ բոյսեր արեգական ջեր-
մութեան ազդեցութեամբը ունեցած
ջրերնին տերևներնուն երեսէն կը գո-

1 Ամիննիաքին բաղադրութիւնն է 1 մաս ազոդ
և 5 մաս ջրածին :

2 Ածխական թթուին բաղադրութիւնն է 1 մաս
ածուխ և 2 մաս թթուածին :

3 Գոլ . Infusoirs .

4 Գոլ . Molécule inorganique .

5 Գոլ . Molécule organique .

6 Գոլ . Hydrogène carboné .

լորշացուենն : Մթնոլորտին մէջ գրաւ նուած ջրին քանակութիւնը խիստ փոփոխական է , բայց երբէք օդը ջրով յազեալ վիճակի մէջ չէ , ապա թէ ոչ արտաշնչութեան վրայ նոր այլայլութիւններ բերելով՝ էակաց կեանքը վրտանդի մէջ կը ձգէր :

Բննեք հիմա օդոյն մէջ գտնուած կազերուն քանակութիւնը . բնաբանից փորձերէն կը հետևի թէ զանգուածով առնուած օդուն մէջ 100 մասին 20՝8 մաս թթուածին և 79՝2 մաս ազօդ կայ : Իսկ այս կազերը կշիռքով առնելու ըլլանք՝ վերոյիշեալ թիւերը կը տարբերին , երկու կազերուն ծանրութիւնը նոյն չ'ըլլալով , որով կը գտնենք 100 կրամ օդին մէջ 23 կրամ թթուածին և 77 կրամ ազօդ : Ամեն տեղ և այլ և այլ բարձրութեան տակ օդը միշտ նոյն բաղադրութիւնը կը պահէ . մթնոլորտին այսպէս հաստատուն մնալը՝ բնութեան աստուածադիր օգտակար օրէնքներէն մէկն է : Մակայն մասնաւոր պարագաներու մէջ քանի մը փոփոխութիւններ տեսնուած են , որոնց մեկնութիւնը դիւրին է տալ . բուսերով ծածկուած և ծովու ջրով լեցուած լրճակներուն վրայի օդին մէջ արևուն ճառագայթած ժամանակ 100ին 23՝67 մաս թթուածին գտեր են . այս թթուածին կազին շատնալուն պատճառը բոյսերն են . այս վերջիններս , ինչպէս որ արդէն շատ անգամ զուրցեցինք , ցորեկ ատեն ածխական թթուով կ'ապրին և միակերպ թթուածին դուրս կուտան . նոյնպէս ծովեզերքները և անշարժ ջրերուն վրայ ապրող ջրածնիները կրնան թթուածին կազին քանակութիւնը աւելցընել կամ պակսեցընել : Մայիս ամսու մը մէջ հիւսիսային ծովուն երեսէն ժողոված 100 կրամ օդին մէջ 23՝12 կրամ թթուածին գտնուեր է . իսկ նոյն տարւոյն օգոստոս ամսոյն մէջ 100 կրամին 22՝6 կրամ . այս զգալի տարբերութիւնը դիւրաւ կը մեկնուի ջրածնիներուն քիչնալէն կամ շատնալէն : Բայց պէտք չէ զարմանալ մթնոլորտին այսպիսի փոփոխութիւնները՝

տեղական և պայմանաւոր փոփոխութիւններ են :

Մթնոլորտին մէջ եղած ածխական թթուին քանակութիւնը փոփոխական է , Յէն ինչուան 6 տասըհազարորդ . իսկ սովորական թիւն է 4 տասըհազարորդ : Այս կազիս համար ալ ինչ և իցէ տեղ որ փորձերը ըլլուն՝ միշտ նոյն համեմատութիւնը կը գտնուի : Եթէ դիտելու ըլլանք կենդանեաց շնչառութենէն առաջ եկած ածխական թթուն , և միւս կողմանէ արևու ժամանակ բուսոց արտաշնչած թթուածինը , կը կարծուի որ ածխական թթուին քանակութիւնը ըստ ինքեան պէտք էր աւելնար կամ պակսեր , ըստ որում տեղ մը աւելի կամ պակաս , կենդանիք կամ բոյս գտնուէին . բայց կազերուն կարգէ դուրս արագութեամբ ծաւալելովը օդը ամեն տեղ իր հաւասարակչութիւնը կը պահէ : Մի և նոյն օրուան և ժամուան մէջ Բարիզու մօտ Մոնմորանսի գեղին օդը և Բարիզու օդը վերլուծելով , առջինին մէջ 2,909 տասըհազարորդ ածխական թթու գտեր են , իսկ վերջինին մէջ 3,190 տասըհազարորդ . այս պզտի տարբերութիւնը ոչինչ բան մըն է համեմատութեամբ աս երկու տեղեաց բունակցացը թուոյն տարբերութեանը և պատճառուած ածխական թթուին քանակութեանը : Դարուս անուանի բնութաններէն մէկը՝ Պ . Պուսէնկոյ , քանի մը տարի առաջ հաշուեր և գտեր է՝ որ Բարիզու մէջ 24 ժամուան միջոցը մարդկանց և անասնոց շնչառութենէն , վառարաններէն և կազերու լուսաւորութենէն պատճառուած ածխական թթուին չափը 2,944,641 խորանարդ մէդր է եղեր : Բարիզու մակերևութին տարածութիւնն էր աս փորձը եղած ժամանակ 34,396,800 քառակուսի մէդր . եթէ ածխական թթուն մէկէն 'ի մէկ ձևանալու և տարածուելու ըլլար՝ Բարիզ քաղքին մակերևոյթը տաւ նորդամէդր բարձրութեամբ կազով պիտի ծածկուէր : Այսպիսի պարագաներու ատեն օդը սաստիկ վտանգալի կ'ըլլար եթէ տեսակ տեսակ պատճառներ

չըլլային կազերը ցրուելու . աս պատճառներէն գլխաւորն է հեղանիւթոց ծաւալական և առաձգական զօրութիւնը , քամիները որ միակերպ փողոցները կը մաքրեն . դիտելու է նաև որ ածխական թթուն կամաց կամաց կը ձևանայ և թէ վառարաններէն առաջ եկած ածխական թթուն օդին բարձր կարգերուն մէջ կը տարածուի . այս պատճառներովս միայն կրնայ մեկնուիլ թէ ինչպէս օդը միակերպ իր բաղադրութիւնը անփոփոխ կը պահէ : Ուրեմն կրնանք ըսել թէ բազմամարդ քաղքըներու օդը զգալի տարբերութիւն մը չունի գեղերուն օդէն :

Ածխական թթունին քանակութեան փոփոխութիւնը այնչափ կենդանիներէն չկախուիլ՝ որչափ տիեզերական և կամ քիմիական օրէնքէ մը . ածխական թթուն ջրին մէջ դիւրաւ լուծանելի է , որով գիշերուան ցօղը և մրկաց ժամանակ եկած անձրևները բաւականապէս աս կազը կը պակսեցընեն , թէպէտ և միւս կողմանէ հրաբուխները միակերպ ածխական թթու կը տարածեն մթնոլորտին մէջ : Այս կազիս շատութեամբ կը մեկնեն մեր օրերը այն նախալրհեղեղեան բուսոց բազմութիւնը , որոնց մնացորդները ձևացուցած են ընդարձակ ածխահանքները որ երկրիս խորերը թաղուած մնացած են :

Ինչուան հիմա ըսածներնէս կը հետևի այս ընդհանուր օրէնքս՝ թէ կենդանիք միակերպ զօդը կ'ապականեն իրենց արտաշնչած ածխական թթուով , իսկ բոյսերն աճելու և զարգանալու համար արևուն ազդեցութեամբ այդ թթունը կը բաղալուծեն : Այս երկու փոփոխակի գործողութիւնները ընդ մէջ կենդանեաց և բուսոց՝ մթնոլորտին մաքրութիւնը և հաւասարակշռութիւնը կը պահեն . իսկ եթէ յանկարծ աս հաւասարակշռութիւնը խախտուելու ըլլար՝ կենդանիք զարբերով կրնային բաւական թթուածին կազ գտնել դեռ . մթնոլորտին մէջ իրենց պիտոյիցը համար , ենթադրելով որ արտաքին պատճառներ օդոյ բաղադրութիւնը չ'այլայլէին :

Մրրկաց ատեն եկած անձրևաց ջրերուն մէջ մաս մը ամմոնիաքի ազօդատ կը գտնուի . այս աղիս ձևացումը մեկնելը դիւրին է . մթնոլորտին մէջ տարածուած ջրի՝ գոլորչիքը ելքարական կայծերով կը բաղալուծուի , ջրածին կազը մթնոլորտին ազօդին հետ միանալով ամմոնիաք կը ձևանայ . իսկ միւս կողմանէ ջրին թթուածինը ազօդին հետ միանալով ազօդական թթու՝ կ'ըլլայ . հետևաբար ամմոնիաքն ազօդական թթուին հանդիպելով ամմոնիաքի ազօդ . կը ձևանայ : Մրրկալից անձրևներուն ըրած բարի ազդեցութիւնը բուսոց վրայ ամմոնիաքի ազօդատիներկայութեամբն է : Մթնոլորտին մէջ ամմոնիաք կապն ալ կայ . եղած փորձերէն կը հետևի որ կշիռքով առնուած 1,000,000 մաս օդին մէջ 0 133 մաս ամմոնիաք կը գտնուի : Ինչպէս կ'ըլլայ որ այս պզտի մաս ամմոնիաքը բաւական ըլլայ բոլոր բոյսերուն հարկաւոր եղած ազօդը տալու . եթէ մէյմը մտածելու ըլլանք մթնոլորտին տարածութեանը և թանձրութեանը վրայ կը տեսնենք որ ըստ ինքեան այս պզտի մաս ամմոնիաքն ալ բաւական է : Ինչպէս որ ածխական թթունին համար ըսինք , այսպէս ալ ամմոնիաքին համար կրնանք ըսել թէ անձրևները և ցօղերը աս կազին քանակութիւնը կը փոփոխեն :

Անշարժ ջրերէն միակերպ մէկ կազ մը կ'ելլէ գործարանաւոր մարմնոյ փրտութենէն ձևանալով , որոնք տիղմերուն մէջ թաղուած մնացած են . աս կազը որ ընդհանրապէս ճահիճներու կազ կը կոչեն՝ ածխուտ ջրածինն է , որ կը գտնուինաև ածխահանքներուն մէջ . աս կապն է նմանապէս պատճառ այն բոցերուն որ երբեմն կը տեսնուին Ապենինեան լեռանց կողերուն վրայ , մթնոլորտին մէջ ածխուտ ջրածինն հետքերը կը տեսնուին : Ամէն մարդ լսած է ածխահանքներուն մէջ ատենօք հան-

1 Ջրին բաղադրութիւնն է 2 մաս ջրածին և 1 մաս թթուածին :
2 Գ. Acide azotique.

դիպած մեծամեծ վտանգները . ած-
խուտ ջրածինը ածխահանքներուն մէջ
կը տարածուի . գործաւորները ճարգով
ներս մտած ատեննին կը բռնկէր . բա-
րերազդարար Տէվի'ի րապահովութեան
լապտերովը՝ այս վտանգաց առջևը ա-
ռաւ :

Կը ֆնայ հիմա մեզի քննել օդին մէջ
գտնուած ջրին գոլորշիքը՝ որուն քանա-
կութիւնը կը փոխուի մթնոլորտին բա-
րեխառնութեանը համեմատ , ցորե-
կուան և գիշերուան այլ և այլ ժամերուն,
եղանակաց և կլիմայից համեմատ :
Այս խնդիրս երկայն դիտողութեանց
արժանի նիւթ մը ըլլալով, անոր հա-
մար ուրիշ անգամ մը տեղն 'ի տեղ կը
խօսիլք ջրին գոլորշեաց վրայ , անոր
բաժանման օրինացը և էակաց վրայ ը-
րած ազդեցութեանը :

Մթնոլորտին ամեն մէկ տարերքը
քննելէն վերջը , հարկաւոր կը սեպեմ
ուրիշ մէկ թունաւոր կազի մը վրայ
խօսիլք՝ որ է ծծմբաջրածնական թթու
կամ ծծրմբուտ ջրածինը ¹ : Ափրիկէի
արևմտեան եզերաց գետերուն ջրոցը
վրայ եղած փորձերը կը ցուցնեն թէ
աս վտանգալի կազը կը ձևանայ ընդ-
հանրապէս գետերուն բերանը ուր ա-
նուշ ջրերը կու գան աղի ջրոց հետ կը
խառնուին . Եւրոպայի տեղերը ծովուն ջրին
մէջ եղած դործարանաւոր մարմնոց
միջնորդութեամբը կը բազալուծին , ո-
րով ծծրմբաջրածնական թթու կը
ձևանայ , որ ջրին մէջէն դէպ 'ի մթնո-
լորտ կը բարձրանայ : Այս կազիս սաս-
տիկ թունաւոր ըլլալը հասկըցընելու
համար բաւական է յիշելը թէ օդին
մէջ աս կազէն ¹/₁₈₀₀ մաս գտնուելու որ
ըլլայ , պզտի կենդանիները վայրկեանի
մը մէջ կը մեռնին : Միսիսիբի , Գան-
գէս և Նեղոս գետերուն տեղալիցը քով
դժբաղդարար շատ անգամ կը պատա-
հին սաստիկ ջերմեր , մաղձացաւ , ժան-
տախտ , նոյն իսկ այն տեղուանքն ալ
ուր անուշ ջրերը ծովուն ջրերուն հետ

կը խառնուին : Ճահիճներուն վրայ փոր-
ձած տեսած են թէ ամեն անգամ որ
ծովուն աղային ջրերը անուշ ջրերուն
մէջ կը խառնուին՝ մօտակայ երկիրնե-
րուն օդը կը գէշնայ . ուրեմն առանց
տարակուսի կրնայ ըսուիլ որ այս գալ-
շելի հեղանիւթը այն տեղերուն օդը
կ'ապականէ և մարդս ալ կամաց կա-
մաց թունաւորելով մահկանացու հի-
ւանդութեանց ենթակայ կ'ընէ :

Բնաբանական խնդիր չըլլալուն պատ-
ճառաւ չեմ կրնար հոս օդին անմաք-
րութեանը տեղական քանի մը պարա-
գաները յայտնել , որ աւտոլլութեան
ուսման տակ կ'երթայ . միայն այս վեր-
ջի յայտարարութիւնս կ'աւելցընեմ , որ
սենեակի կամ որ և իցէ գոցուած բնա-
կարանի մը մէջ՝ մարդկանց բազմու-
թիւնը զօդը շուտով կ'ապականէ , ուս-
կից շատ անգամ վնասներ առաջ կըը-
նան գալ , անոր համար կարելի եղածին
չափ սենեկաց օդը ստէպ փոխելու է :

Կը շարունակուի :

Մարկոս Արեւիկոս կայսեր մահուարևե
առաջ իր Պակուզիոս քարեկամէն
ընդունած խրատը , ու իրեն ակոր
տուռս պատասխանը .

Ով որ Մոկրատայ իմաստասիրին
վարքը կարգայ , կը զարմանայ որ հե-
թանոս մը կրնայ ատ աստիճան առա-
քինութեան հասնիլ : Բայց Մոկրատ ոչ
հարստութիւն ունէր , և ոչ աշխարհիս
կը հրամմէր . հարստութիւնս ու իշխա-
նութիւնը մարդս գլխէ կը հանեն . ա-
նոր համար շատ աւելի զարմանալի է
նոյն առաքինութիւնները հոռմայեցի
ինքնակալի մը վրայ տեսնել : Մարկոս
Արեւիկոս կայսեր առաքինութիւնները
իր գործքերէն յայտնի են , բայց իր դը-
րած թղթերն ու մահուընէ առաջ ը-
րած խօսակցութիւնները զարմանալի
կերպով կը ցուցընեն իր առաքինական
սկզբունքները , որչափ որ հեթանոս մը

¹ Գ-շ . Acide sulfhydrique կամ hydrogène sul-
furé .